

ՏՆՕՐԷՆ - ԵՍՏՈՒՐԱՊԵՏ

Հ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՍՆՈՐԴԱԳՐՈՒՅԻՆ

ՏԱՐԵՎԱ 500 ՂՐԸ
ՎԵՑԱՍՏԵԱՅ 250
ԵՌԱՍՏԵԱՅ 150

Բաժանորդագրութիւնը կ'սկսուի
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ



ՌԵՍՆԱԳԻՐ - Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MANOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

ԱԶԳԵՐՈՒ ԺԱԿԱՏԱԳԻՐԸ ԱՆՀԱՏՆԵՐԸ ՉԵՆ ՈՐ ԿԸ ՎԱՐԵՆ

Ամեն ազգ կամ լուս է ըսել կառավարութիւն իր ինքնաշարժ ուղղութիւն ունի, պիտի ըսենք, իրենց բառով՝ քաղաքականութիւնը:

Այն կառավարութիւններն, որոնք որոշ քաղաքականութիւն մը զուրկ են և պատահաբար ուղղութիւն մը ընդգրկած են միշտ սխալներ գործած ու ստեղծախոսութիւններու հանդիպած են:

Այս սխալներն գործած են թէ իրենց ժողովուրդներուն հանդէպ և տեղի տուած անհարկի յեղափոխութիւններու և թէ արտաքին աշխարհի հետ, պատճառ դառնալով վէճերու, թշնամութիւններու և պատերազմներու:

Եւ այս անորոշ քաղաքականութիւնէն վնասուած են այդ կառավարութիւններն, այսինքն այն ժողովուրդը՝ որու ղեկավարներն չեն ունեցած որոշ ու անաղական քաղաքականութիւն մը ուղղելու համար կառավարական մեքենան ղեկի այդ ուղին:

Ընդունուած ճշմարտութիւն մըն է որ տոկոսն և որոշ քաղաքականութիւն մը հետեւող բոլոր կառավարութիւններն այսօր գերակշիռ դերք մը կը գրաւեն ազգերու պատմութեան մէջ:

Անգլիոյ վրայ կ'հիանանք և անոր հեռուտես քաղաքականութիւնը վրայ սքանչացուածով կ'ստանանք, բայց եթէ իրենք ուզենք խորը մտնել անոր քաղաքական կազմակերպութեան, այն ատեն միայն ի վիճակի կ'ըլլանք բոլորնեւ լուծել՝ անգլիական ժողովուրդին քաղաքականութիւնն ուղղող անձերն երբէք քմահաճ, պատեհապաշտ և որք որին տեղի ունեցած քաղաքական ղեկաւարներն վրայ չէ որ առաջնորդած են կառավարական նաւը:

Այսօր Լոյտ ձորձ իրեն կորող դիւանագէտ մը ճանչցուած է, բայց մի կարծէք թէ Բիլերու, Բիթերու, Չաթաներու, Բաւլէրսթոններու, Տէրուներու, Պիթոնֆիլաներու, Սոլպրի կրու, Կլաւսթոններու, Չեմպլէյներու ուղղութիւնէն տարբեր բան մը որդեգրած է, Անգլիոյ դիւանագէտներն կրնան դարձու ընթացքին մէջ փոխուիլ, բայց Անգլիոյ աւանդական քաղաքականութիւնն երբէք չչեղիր հազարաւոր սարիներէ ի վեր, իրեն համար գծած ուղիէն:

Բայց չկարծուի թէ՛ Անգլիա ամենէ աւանդապահ երկիրն ըլլալով չհետեւիր ընաշնու մի օրէնքին, ընդհակառակն այդ օրէնքին համեմատ փոփոխութիւններ կ'կրէ, սակայն իր հիմնական կէտերուն մէջ երբէք չչեղիր իրեն համար գծուած ուղիէն, հետեւաբար անձերն կարեւորութիւն չունին, անոնք կը վարեն որուան քաղաքականութիւնն իրենց վարպետներուն ստուերներէն առաջնորդուած:

Միեւնոյնն կրնանք ըսել կարգ մը որիչ եւրոպական ազգերու համար եւս, նոյնիսկ Գերմանիա իր աւանդական մտածեւեռեալ քաղաքական գաղափարին զոնն է այսօր, գծուած Մեծն Ֆրէտէրիքէ, Նուրազործուած Պիլադքէ և ի կատար հանելու վիճակուած գերման նախորդ կայսրէն:

Իտալիա՝ եւս Բալթիկ, Վիքթոր Էմանուէլի, Կարիպալտի շնորհիւ ունեցած է իր որոշ քաղաքականութիւնն և մասամբ հասած իր փոփոխներուն իրագործման: Քրիստի շեղեցու այդ քաղաքականութիւնն, դաշնակցելով Գերմանիոյ և անոր ճնշման տակ իր աւանդական թշնամիին Աւստրիոյ հետ, սակայն ախանառես ենք այսօր, որ թօթափեց այդ սխալ ուղղութիւնն և միացու համաձայնակներու, իր նախնիքներուն քաղաքական ընդհանրներն իրականացնելու համար:

Կրնանք շատ երկարել շարքը, օրինակներ յառաջ բերելով

ՂԱՍԱՆ ՓԱԹՐԻՔ

ՀՈՅ ՏՆՈՒԱՊԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Չգիտեմ պատմական իրականութեան մը հետ ինչ կապ և կամ որքան աննշաթիւն ունի Հասան մը որ Պատրիարք եղած ըլլայ և փոխադարձաբար՝ Պատրիարք մը, որ զիջանի Հասան մը ըլլալու:

Եւ սակայն աշխարհը կը գտնուայ: Ու մէջտեղը կայ Հասան Փաթրիք մը, գարավերջիկ ըրենիներու ազտօտ որջ մը անիծապարտ:

Մալաթիոյ հիւսիսային արևմտակող մը, ութը ժամուան հեռաւորութեան մը վրայ մեծակ ու ընդարձակ զուգաբար մէջ այն, Գրգըլպաշներու կեդրոն մը, որ թուրք տարրի միակ ներկայացուցիչը նօզթայի հրամանատարը և մի քանի հատարակ զինուորներ էին ճարտար, զիմագծով ու թիփով և հոգեբանութեամբ կատարե-

լսպէս Գրգըլպաշներու այդ համայնքը սակայն՝ ամբողջովին թրքախօս է, և հակառակ այդ ցեղի հայոց հանդէպ ունեցած աւանդական բարեկամութեան ու բարեկամութեան, Հասան Փաթրիք եղած է վերջին հայ տարազրութեան և ընտանջման ամենատակալի տանջարաններէն մին, և որ ցարդ կը գտնուին կարգ մը հայտ հիւներ, առաւելապէս Սեբաստիա-Ամասիա-Մալաթիոյ շրջաններէն:

Մալաթիա կ'գտնուի, իբր զինուորական կեդրոնի հարեւրապետ բժիշկ, և բազմի ամենագան խաղով մը պաշտօն մը յանձնուած է ինծի իբր ատոյ՛ւ պահական քննիչ պտտիլ շարունակ Եփրատի եղերքէն, Իզմիլէն և Փրաթէն մինչև Մալաթիա-Հասան Փաթրիք-Արշա և Հէքիմ խան Ամէն մէկը Տէր Զօրի հետ հաւասար գծի վրայ կեցող հայու աննախընթաց ու անբացատրելիորէն ցաւալին զուլումներու ամենամեծ գաղանային որջեր:

կարգ մը պետութիւններէ, որոնց սխալներն անցեալին ու ներկային մէջ, եղած են անոնց վաղեմի քաղաքական ուղղութիւններու արդիւնքներ:

Այսպէս ուրեմն սո որոշ եզրակացութեան կ'հասնինք թէ՛ այսօր որ և է պետութեան մէջ նշանաւոր հանդիսացող քաղաքագէտ մը կրնայ հրաշքներ գործել, կրնայ նոյնիսկ իր աննկուն քաղաքականութեամբ իր հայրենիքը ամենամեծ վտանգէ մը ազատել և անոր մեծութեան ու փառքին համար տխրանեան գործ մը ի գլուխ հանել, բայց երբոր իրեն յաջորդներն չյաջողին անոր զորքը շարունակել, սպիկար գտնուին, իրենց ժողովուրդին քաղաքական պահանջներուն վրայ կերտուած ծրագիրն յառաջ տանել, դատապարտուած կ'ըլլան վաղ թէ անազան կրկին իյնալու երէկուան սխալներուն մէջ և պատճառ դառնալ քաղաքական անգարմանիկ ձախողանքներու:

Ուրեմն անհաստեղը կուզան կ'ունցին, ժողովուրդներու կամ կառավարութեանց քաղաքականութիւնն է՝ որ հիմը կ'կազմէ ազգերու ապագայ ճակատագրին:

Հ. Մ.

Օրին մէկը, ամառնային դժբախտ օր մը, կ'ստիպուիմ առողջապահական կայաններու քննութեան շրջան մը ընել զէպի Հասան-Փաթրիք, և Գրգըլպէօյ կամուրջին քով հրաման կուտամ ջորեկարինս (Մալաթիոյ թուրք մը) որ կանց առնէ: Կը նստիմ մի քիչ հանգչելու և կերակուր ուտելու: Զորակարին ալ բաժին հանելու չեմ մտնար:

Է՛, սէօյլէ հէչէրիմ, կ'ըսեմ, իր պալանային բերանը կը բացուի, ու իր անմեղութիւնը և հայասիրութիւնը ապացուցանելու համար մէջտեղ նետուած շանքարով մը յետոյ՝ կ'սկսի սրտամէլ թէ ինչպէս Արաբիքու և այն շրջանի հայութեան մեծամասնութիւնը չէթէներու ժանտարմաներու ղեկավարութեամբ ճամբայ էր հանուած զէպի «Մուրտտ պէլի գօնագը», զիւայնիորէն հեղեմական բացատրութիւնը մը Մուրտտ շայի նոյն այդ կամուրջը սկիտարկող, թէ ինչպէս թուրքի բորենային ուղեղէն վիժած ամէն տեսակ տանջանքներու ենթարկուելէ և գեղեցիկ աղջկաններն ու մանր աղջիկը զատելէ ետք՝ մնացեալները որոնք զեռ տղայական պարզամտութեամբ մը Մուրտտ պէլի գօնագին որքան մնացած ըլլալը կը հարցնէին, կամուրջին վրայ մտնուած, զլխատուած և հազարներով ջուրը նետուած էին:

Չգայումներու բորբոքումն և ուղեղի փոթորումը կարեւոր ասնձերու համար կը սեղմեմ սիւստներս, և ցաւալին պիտիմներով շուրջի խոտերս կը քաղեմ ու կը նստեմ Տէրվիլիո, որ ուրախութեամբ կ'արածի, մարդկային մեծ ցաւին ու զրկումներուն անգիտակի Պան մը կը մտածեմ աստուածային ուշացող արգարութեան վրայ և կը փորձուիմ խորհիլ թէ լաւագոյն չպիտի՞ ըլլար կենդանի մը ստեղծուած ըլլալու:

Գրգըլպէօյի կամուրջէն Հասան Փաթրիք հինգ ժամ է Ալեքսանդրոս գալտի մը մէջէն անցնող ճամբուն ամբողջ երկայնքին երկու կողմի վրայ ճերմակ սպիտակ և գանկեր սփռուած են Տէրվիլա տղիւ և զբալուն է, ու ամէն քաղաքիտի կը խորչի անոնցմէ: Զորեպանս կ'պատմէ թէ ամբողջ ալ Հայու անթաղ աճիւններ են, և անգամ մ'ալ իր անմեղութիւնը կ'բացատրէ—տրդէն որ մի թուրքը մեղուոր է Հայկական 1,200,000 հոգիներու ջարդով— նա իր գիւղացիի պարզամտութեամբ կ'աւելցնէ թէ 5 ժամուան այդ երկար ճամբուն 5-6 անգամ հայերու տարակիր կարուստներով լեցուած, և մորթողութեամբ անհետացած է...:

Օրը իրիկունէ, Հասան Փաթրիքի զինհիւրանոցն եմ ծառատանմիջապէսգիւղը կը խրկեմ ուտելիք գնելու և քննելու համար թէ վերապրող Հայեր կ'ան: Ժամ մը հոտը կը վերադառնայ պէտք եղած նիւթերով և լուր կուտայ թէ Հաճի Էօմէր տնուն հայ մը կայ, որը քիչ մը ետքը պիտի գայ զիս տեսնելու:

Արդէն իրիկուն է և օդը մթնցած: Քիչ ետք ներս կը մտնէ ալէհի Ծերուկ մը, երկայն ճերմակ մօրուքով, հինցած ֆէսով մը՝ որուն բոլորտիքը փաթեց ալ կապած է իր հագած էնթարին որը պատռա պատռա ըլլալուն հակառակ խնամով կարկատուած է յըստակ կերպով կ'երեի թէ Արաբկերի գործ է:

Ա. ելի վիշտերու ծանրութիւնէն քան թէ տարինու բեռն ձերացած այդ մարդը վախէն դողալով, և թուրք սպայի մը ներկայութիւնէն սարսփահար՝ կը մտնեայ և յարգանքի համար կուզէ ձեռք համբուրել: Չեմ թողոր ու յիսկսիմ

- Պապա՛ իսմին նէ՛:
- Հաճի Էօմէր:
- Է՛ պապա նե՛րէլիսին:
- Արաբկերիլիմ, Ալլահ Էօմէրլէր վէրսին էֆէնիտիմ, կ'ըլլայ իր պատասխանը:

Մէկ ակնարկով իսկ կըցած է ի վերուժ ծերուկը, թափանցած է իր էութեան Ամբողջ ուժերս ի մի կը հաւաքեմ թոպէի մը համար, և սիրտս պայթեցնող վշտի մեծութիւնը ծածկելով — Փիլիպոս վարժապետ, այս ի՞նչ ես եղած խնամի՛ կըսեմ:

Այս անակնկալ յայտնութիւնէն շուտաբար, աչքերուն մէջ տարորինակ ժըպիտ մը արտասուքով խառնուած մանկան մը պէս արտասուել կուտայ օտարակիցը պատմէ շարունակ կողեւորի և կը յուզուի կեանքի անուշութեան գիտակից, վարժապետը փորձած էր վերապրել մեծ աղէտէն՝ առժամաբար Սիւլէյման Ալա գտնալով Այդ ալ չէր ազատած զինքը և հալածուած ու տարապրուած էր մինչև Հասան Փաթրիկի դատերը: Այս անգամ գրգըլպաշ քերտը ցցուած էր իր դէմ, կատաղի և անգութ, և զուլանք զբալով Սիւլէյման անունէն, իրեն տուած էր Հաճի Էօմէր անունը: Իր մեծկակ ճերմակ մօրուքը միտնալով նահապետական չիպուխին, իրեն կուտային Տէտի մը պատկառանքը, և իրօք զըզըլպաշը յաճախ կը համբուրէ անոր աջը և կը խոնարհի անոր սուշել:

Փիլիպոս վարժապետը իմ խնամին էր, իր ընտանեօք տարագիր, և թըշուառ ու հացի կարօտ Ապկայն նահապետ

տական հիւսիսարեւմտեան իր գերին մէջն է, և ստիպուած տեղի կուտամ որ իրիկուան կերակուրը ինքը պատրաստէ: Աւանդական պղուր փիւլաը կը պատրաստուի. վարժապետը տեղէ մ'ալ քիչ մը օդի կը ճարէ և զողողուն ձուքը ընդ կը բերէ սեղանին մօտ. և լուսաքոյն օրերու մաղթանքներով հայութեան ամենամեծ գերիզմանոցներէն մէկուն մէջ սիրտ սրտի՛ծերուկ վարժապետին հետ խորհրդաւոր իրիկուն մը կապրինք:

Փիլիպոս վարժապետ հայ Սիմէոն ծերունիներէն մէկն է: Ան հաւատացած էր տարիներ առաջ Արշալոյսին՝ որ ծագելու վրայ է: Ան որչա՞ծ էր անմիջապէս դառնալ իր օճախը, Արարկիր, ու Մայր եկեղեցիին մէջ պատկեր իր երկու տղայքը, Փայլակն ու Կայծակը, որոնք այժմ չափահաս են: Ու պարագաները կը ցուցնեն թէ վարժապետին փափաքները պիտի իրականանան:

Ո՛չ մի չահախնդական զգացում, ո՛չ մի անձնական ակնկալութիւն ունիմ հայու հոգեվարքային զիմայեղումները պարպտելով հանրութեան պարզելու մէջ: Ո՛չ մի յաւակնուութիւն հայ մեծ ցաւի ամենափոքր երգիչն իսկ ըլլալու. սակայն եփարտի շրեքով ու Հայաստանցի ինքնայատուկ զգացումներով շարժուած իմ ուղեղը անգիմարելիքն կը մղէ զիս իմ կարողութեան չափով արձագանգել մեծ եղեռնը, անհամակիր ու անզգայ հայ սրտերու, Մայր հայրենիքի զուլումին անտեղեակ երջանիկ հայերու...:

Ամենամեծ գոհունակութիւնը պիտի զգամ եթէ այս տկար վիրուծումները հայու բնայնման, եթէ այս գունատ պատկերները մեծ ոճիրին՝ կարենան Մայր հայրենիքի համայնատարած ամայութեան մէջ թափառող մի քանի որբերու կիսանքը փրկել: Սրբել արցունքը ստեղծագործուած և անպատուրուած մի քանի աղջիկներու դաւկացած աշտերէն:

Ուրեմն ձեզի եմ, ով՛ դուք որ տարիներ առաջ հողին յանձնած ձեր մէկ սրբելիին համար դեռ սեւեր կը հագնիք:

Ձեզի եմ ո՛վ դուք որ կեանքի ամբողջ վայելքները ունիք ու կը բազմիք ոսկիէ պատուանդաններու վրայ:

Ձեզի, եմ, ով՛ դուք որ տակաւին սանթրի մը ունիք ձեր քսակին մէջ, կամ լեզու մը և կամ առողջ բազուկներ:

Ձեզի եմ, ո՛վ դուք որ զաւակներ ունիք, որ ունիք կին ու ընտանիք, որ երջանիկ էք, ու օրուան զբաղումներէն վերջ կուզաք ձեր խոնջանքը մոռնալ ընտանեկան անուշ յարկի մը տակ, զգուանքու զգացումներով:

Եթէ հայրենիք ու ազգութիւն ձեզի համար ոչնչութիւններ չեն, ոչ ալ ցաւազինորէն տխուր իրականութիւններ տուած պիտի ընդունուիք: Եթէ դեռ կայ ձեր մէջ կաթիլ մը արեւն Հայկէն ու վարդանէն և Սերոբէն մնացած, բերէք հասարակաց զոհաբերութեան սեղանին ինչ որ ունիք, որպէսզի սրբուին արցունքներ, կիսանք առնեն մահամերձ խելակները վերապրող հայութեան. որպէսզի վերակազմուի հայութիւնը առողջ և պատկառազողու և հսկայ:

Որպէսզի իր թշնամիներն իսկ ծուր գնեն անոր առջեւ և կռնի յարգանք քեզու:

ՏՕԲԹ. Յ. ԴԱՐՔԻՆԵԱՆ

ԴԵՐ ԶԱԿ

ՄԻՔԱՅԷԼ Մ. ՊԱԼԵԱՆ

ԶՈՒՀԱ ՊԵՏԵՍՔԷՆ Խ. 11

Կը պատրաստէ ամէն չափի և տեսակի վրայ հազուսանք ճաշկաւոր ու վերջին նորածնութեանց համաձայն Դիւրեղները միշտ գոհ կ'մնան:

ԵՕՏԵՄԻՇԻ ԳՐԱԻՄԱՆ ԱՌԹԻԻ

Հինգերորդ տարին է որ կը զբաւնուիմ Ձմիւռնիա՝ մէկէ աւելի անգամներ պատեհութիւնը ունենալով այցելել Էօտէմիշ: Ուր յաճախ բուն Հայաստանի խմորումներուն ականատես եղած, հպարտ զգացած եմ ինքզինքս հոն վայելել կարենալով հայրենիքի մանրանկար մարմնացումը:

Սրդարև՝ եթէ հոն չկային մայր հայրենիքի մտաւորականներն ու կըլտրիճները, այդ հեռուոր հարկոյնին տակ, կար բուռ մը նմոյշ հայութիւն: Կ'ապրէ՛ր Էօտէմիշցիին, պատնէշին վրայ էր ան, միշտ կողմ ու պատրաստ, իրեն ուժին ներսը չափով օժանդակելու բոլոր անոնց, որոնց մասին պէտք ցոյց պիտի տրուէր:

Սոսկումի և արհաւիրքի չորս երկար տարիներու ընթացքին, անիկա չի լքեց ո՛չ միայն իր մէջ ապրող զժբաղղ ընտանիքները, այլ և պատասխանեց զուրաէն եկած ամեն հլրաւէրի. չի թերացաւ, ո՛չ միայն կըրօնական այլ և կըրթական պարտականութեանց մէջ, որոնց ոգի իր իր յորեցաւ՝ զանոնք նախածելի վիճակի մը մէջ պահելու, մարդեց իր թարմ ուժերը, դարբանեց իր կարելի միջոցներովը սպազայ սերունդը՝ որը կուրծք տալու պիտի կոչուէր Ետեղծուած և ստեղծուելիք ամեն պատահականութեանց:

Իրարու քով, կողք կողքի պիտի գանձէք ժողովուրդի ամեն դասակարգ, կղերը, մտաւորականը, վաճառականն ու արհեստաւորը, խանութպանն ու զործաւորը, ձերն ու երիտասարդը առանց սեռի խտրութեան:

Մեղուներով լեցուն փեթակի մը տպուորութիւնը կը կրէք հոն. այսօր սգահանդէս ունին, վաղը նուագահանդէս, ուրիշ օր մը պարահանդէս, լսարան, թատրոն, երեկոյթ, վիճակահանութիւն միշտ ի նպատակ բարեկեցիկ հաստատութեանց: Խնդրել չիկալ հոն, ոչ ալ սպասուալ... անպահապարհ հնչեցնողը նոյնիքն ժողովուրդն է — եկեղեցւոյ զանգակը —, անմիջապէս հոն, եկեղեցիին շրջափակը կ'գտնէք այդ համբուած հայութիւնը կամովին, առանց այլ և այլի ամենքն ալ երզուընցած կարծես զիրար գերակշռելու:

Վիճաբանութիւնք, կարծեաց փոխանակում տեղի կուենան ամենատուր հանգամանքով, բայց երբէք չարակամութիւն և յետին նպատակ. ամենէն յանդուգն ու խելացին սրամըտութեամբ սիրայօժար մտիկ կ'ընէն ո՛րէն զիտողութեան, դիտէ ազնուօրէն սրբազրել իր մէկ սխալ դատողութիւնը, դիտէ զսոցողութեանց ամենէն ծանրին ընդառաջ երթալ երբ խնդրոյ ստարկայ է ազգին շահը, ազգին պատիւը:

Տակաւին թարմ է յիշատակը այն փութկոտ եռանդին զոր ցոյց տուաւ վերջին հանգանակութեանց պահուն անմիջապէս տրամադրելով հազարներ, ի՞նչ կ'ըսեմ, նոյն իսկ ումանք իրենց ամբողջ ունեցածը: Ժամ առաջ օգնութեան հասնելու համար տարագրներու, տիկիներ և օրիւղներ իրենց ամբողջ զարդեղներէն էր որ կը մերկանային թափելով զանոնք հանգանակիչ մարմինն առջև. դարբին մը խանութին սալաքարն ու մուրճն էր որ շալկած կը բերէր ի սպաս կարօտ արեւնակիցներուն:

Էօտէմիշի, հելլեններու կողմէ, զրաւուելէն ետքն ալ, հայութիւնը զիտցած է վարել յոյն և հայ բարեկամութիւնը ամուր հիմերով և մասնաւոր համակրանքին առարկան դարցած դուրաէն եկող հիւրերուն:

Երէկուան, հայուն զահիճ, ոճրապոք թուրքերը այսօր ծուր կը գնեն իրենց զոհին, հայուն առջև, մեղայի կուգան խնդրելով միջնորդել ուր որ անկ է և հայ կղերը իր մեծ վարժապետին օգնելով:

Ներկայացնելով հելլենական հրամանատարութեան, տեղեկացնելով թէ մեղայի եկած այդ աւազակները կ'ուխտեն, ամեն գնով, այլևս չկրկնել անցեալ դէպքերը:

Ձարմանքի մէջ է որ շարունակ կ'ապրես Էօտէմիշ: Եկեղեցիի զանգակը զրգանջից՝ երկսեռ հայութիւնը բարբառուէր հոն է. հանգանակութեան համար զժոտութիւն... քաւիցի. բակին մէջ մէկը կ'տեսնէք որ կտոր մը թուղթի վրայ կը սեւազրէ. արամագիր ամբիւր կը փութայ իր կարողութեանը չափով մաս'ակցիլ եղած հրաւերին:

Այս անգամ Ս. Հռիփսիմեանց և առ այդ եկեղեցւոյ ամուսնաբաժան նախօրեակին կը զուգահայտ այցելութիւնսնկիզիցուց բակին մէջ փութկոտ զործուէութիւնը կը տիրէ: Ալէն, ձախէն նուէրները՝ հորթեր, ոչխարներ, բրինձ, իւր, զրահական նուիրատուութիւններ և այլն՝ կը հասնին Իւրաքանչիւր ազգային իրեն բաժին ինկած զործը կատարելու կարգապահութեամբ կը վարէ, հնաւանդ սովորութիւն մը զոր չորս տարափի ճարիներուն էօտէմիշցին չէր համարձակած զործարկը, այսօր կը վերակախ:

Հարկերու համար, Յիսուսի Քրիստոսի հասարակութեան նուիրած սեղանն աւանդական սովորութիւնն է որ անմահացնել կ'ուզուի և ան մէկ քանի ժամէն ամէն բան կազմ ու պատրաստ է:

Ս. Հռիփսիմեանց ամուսնաբաժան օրը ազգայիններու յատուկ հասարակաց ճաշակոյտներէն զատ՝ զովելի հոգածութեամբ մը 50 հոգինոց ճաշակոյտ մը տրամադրուած էր նաև հելլէն քաւարի բանակին եռանդուն սպաներուն, ինչպէս նաև տեղւոյն յոյն՝ շրջանակի պաշտօնական ներկայացուցիչներուն:

Ճաշակոյտին կը նախագահէր զրաւման զօրաբանակի հրամանատարներէն Պ. Մալէլա, ձախն ու աջը ունենալով յոյն և հայ կրօնական սիւտերը: Ճաշակոյտին միջոցին բաժակածուներ խոսեցան, Տէր Յարութիւն քնն. Յովսէփեան յուններէն, Պ. Օննիկ Թաղէտեան Ֆրանսերէն, իսկ Պ. Գառնիկ Օհանէտեան հայերէն լեզուներով շնորհատրելով քաջամարտիկ հելլենացիներու զրաւումները և զրուատելով յոյն և հայ բարեկամութեանն առաջ զովել բարիքները:

Յունաց կրօնական պետը, ժրջան և ռազմազէտ հրամանատարը և անրէն ուսուցիչը փոխադրածարար պատասխանեցին յուններէն լեզուով, զովելու ըրին հայ մարտիկներուն և մաղթեցին որ խոստացուած քէն տակաւին շատ աւելին վերադարձուի մարտիրոս արժանաւոր հայուն որ ոչ միայն իրեն, այլ բոլոր տկար ազգերու ազատագրութեանը համար շարունակ զինք բարձրացուց և ճակատ տուաւ բարբարոսներու հալածանքին: Երիտասարդաց միութեան նուագախումբը ամբողջ ճաշակոյտին սպասարկութեանց տեղութեանը յունական և հայկական ազգային երգերով և քայլերգներով հաւաքովին փայլաւաւելցուց:

Մայր ասորիճան խանդավառութեանց միջոցին կիցցէներու և որդուրնուս ծափերու զգողիւնով յոյն և հայ բարեկամութիւնն էր որ կը նուիրագործուէր ու մինչև ուշ ստան հաշտեղանի հոնդէսը շարունակուելէ ետք, հրաւիրակները ակամայ իրարմէ կը բաժնուէին:

Լ. ՀԵՔԻՄԵԱՆ

ԱՅԼՈՒՐ ՓՆՏՈՒԷ ԱՆՕԳՈՒՏ Է
Հարկ չկայ վաղել, Տրիկներ և Պարոններ, նորածնութեանց բոլոր անուատուները, ձեր ուզածները զանելու համար Գացէ՛ք սեղակի Գիլիմիսի նորածնութեան վաճառատուները, Թէնէքիտի բասաթ, ուր ձեր արամագրութեան տակ պիտի զրուի, անմրցելի գինեղով, այն բոլոր ճոխ նորածնութիւններն որ այս հաստատութիւնն Եւրոպայի առաջնախորտ զործարաններէ ստացած է:

ՀԱՆՂԵՍ ՄԱՂՆԻՍԱԻ ՄԷՋ

Ամսոյ 15 ին կիրակի կէսօրէն վերջ ժամը 5 ին Մանկագարտէզի սըրահին մէջ տեղի ունեցաւ հանդէս մը որ պատրաստուած էր տեղւոյս կարմիր խաչի Միութեան կողմէ:

Հանդէսը սկսաւ հայկական քայլերգով. որմէ ետք Պ. Թաղէտու Տէտեան խօսք առնելով շնչոց կ. խ. գոյութեան կարեւորութիւնը տեղւոյս մէջ և հրաւիրեց ժողովուրդը՝ քաջաւերելու, օժանդակելու այս բարենպաստակ կազմակերպութեանը քանի որ տեղւոյս կարօտեալներուն ալ օգնութեան կը փութայ:

Յունական քայլերգէն վերջ ներկայացուեցաւ Մազնիս արամախօսութիւնը ուր բոլոր զերտկատարները շատ յաջող կերպով ներկայացուցին իրենց կտոները մանուսանդ Օր. Սարգիսեան իր աղախինի գերին մէջ շատ բնական և զովելի էր:

Քանի մը օրիորդներ ներկայացուցին Ս. Հռիփսիմէ կոյս արամախօսութիւնը որ շատ յաջող կերպով կատարեցին մանուսանդ Օր. Քրիստինէ Ունձեան Հռիփսիմէ կոյսի գերին մէջ կատարեալ էր: Իր յուզիչ ձայնը, իր յըստակ առողանութիւնը նորասաց ճըլմարտութեան մը հանդէպ իր ունեցած և քարոզուած քրիստոնէական կրօնքը ընդունելու անզուսպ փափաքին, արտայայտութիւններու մէջ շատ բնական ըլլալով, ներկաները չափազանց յուզեց:

Ս. Գայանէն ներկայացնող Օր. Գուլիան քրիստոնէական տառապանքները ներկայացնելու և իր նոր քոյրը առաջնորդելու և խրախուսելու գերին մէջ մեծ յաջութիւն ունեցաւ:

Ներկաներու փախաքին համաձայն գերասանական խումբին կողմէ ներկայացուեցաւ Մովսէսի «Բնիկ Ամուսնութիւն» չափազանց քրթալիք զաւելուր և այս անգամ ալ ինչպէս միշտ խաղին հերոսը Պ. Ռուբէն Ունձեան իր քովի շարժուածներով և արտասանութիւններով չափազանց զուարճացուց ունկնդիրները որոնք շատ զոհ սպասարկութեան տակ մեկնեցան հանդէսէն և շնորհակալ եղան կ. խ. Միութեան վարիչ տիկիներուն ուրոնք իրենց անձնակոտ զբաղումները մէկզի ընելով ժողովուրդին այսպիսի օգտակար և շինիչ ժամանցներ կը շնորհեն:

Կը մաղթենք որ նոյն կորովով շարունակին իրենց ստանձնած պարտականութիւնը առանց նկատողութեան առնելու ոմանցմէ եկած քննադատութիւնները Պէտք է անձնաիրաբար շարունակէ իր գործունէութիւնը քաղցի մէջ, որովհետև վերջերս լսեցինք թէ յիշեալ վարիչ անդամուհինը զգածուելով եղած քննադատութիւններէ՝ մտաբեր են հրաժարելու:

ԹԱԻԿ ԵՄԵՐՈՒՆԵԱՆ

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Մազնիսացի ստաղծագործ Սարգիս Մամուէլեան, սակէ չորս տարի առաջ Շամի կողմերն զինուոր գացած իմացնել խմբագրութեան:

—Արարկերցի Սարգիս և Թաղէտու Ձէյպէկեան, սակէ չորս տարի առաջ Նիւ-Յորք կը գտնուէր չորս տարի է լուր առնուած չէ, իմացնել իզմիր Պիթրագար, թիւ 10 Փիլիպոս Ձէյպէկեանի:

—Էրզրումի Դէրջան գիւղէն Մկրտիչ Մարգարեան կը փնտուէ իր կինը Մարիամ, զաւակները Մարտիրոս, Գէորգ, Մուրատ և Արամ. Գոյերը, Էլիզա և Մարգարիտ:
—Յովհ. Ղազարեանի կողմէ եղբայրը Ղազարոս Ղազարեան էօտէմիշի Մարզուանի Գուլիմ ուսանող, պատեւազմին զիտրագրուած, յետոյ Արամ Արապեան անուանով փախստական ապրած ըլլալով իմացուած, տեղեկութիւն ունեցողներ կ'իմզրուի խմացնել հետեւեալ հասցէին, Աւետիքեան եղբայրք Արապեան Իզմիր Պալատայ թերթերէ կը խնդրուի արտասպալ ներկայս:

ԹՈՒՌՆԻԿ ԿՕՓԵՐ

ՄԵՐ ՊԵՏՔԵՐԸ

Պ. Կ Սասունիի հինգչաթի իրի- ուան բանախօսութիւնը ինծի ներ- շնչեք խորհրդածութիւններ՝ զորոնք ընթացողներու հազարից պարտա- կանութիւն կը սեպեմ ինծի:

Պ. Սասունիի տուած տեղագրական անցողակի ծանօթութիւնները խաւա- րակուս Ափրիկէի երկրախօսութիւն- ներէն վերագործող ֆոնֆերանսիէի մը խօսքերուն տպաւորութիւնը ըրին վրաս և. վստահ եմ ասոր, ներկաներէն շատ շատերուն ալ վրան, այնքանի անտեղեակ ենք մենք մեր հայրենի երկրին աշխարհագրական դիրքին, ա- նոր բնական և քաղաքական բաժա- նումներուն, կլիմայական պայմաննե- րուն, վարչական կազմաւորութեան, ազգաբնակչութեան ունեցած դիրքին և կարեւորութեան, և ինչ որ ամենէն ողորմելին է, չենք գիտեր նոյն իսկ անոր բաւական շատերուն արուս- ները, ո՛ւր մնաց ծանօթութիւն ունե- նալ անոնց բնական և ճարտարաբու- սական արգիւնաբերութիւններուն և ապագային մէջ անոնց ընծայելիք հնարաւորութիւններուն վրայ:

Ողբալիք այս վիճակը, հաւատացէ՛ք: Աւելի լաւ գիտենք միայն ինչպէս մէկ գիւղին անունը ու աշխարհագրա- կան դիրքը, Գամալեթայի թերակղզին Հորնի հրուանգանը, Ամերիկայի ճամ- բաները, Աւստրալիոյ չեմ գիտեր ո՛ր ծովախորշը, Բոլոնէզիոյ մէկ կղզեակը, բայց չենք գիտեր թէ ո՞ր է Սոյը, Ճուլֆան, Ախալթը, և որքա՞ն կարգի... Ու երբ Պ. Սասունի անցողակի կը յիշէ այս կամ ան տեղին անունը, բուն փափաք մը կ'ըզգայի մէջս պոռա- լու իրեն մեր սգիտութիւնը և ազա- չեւու որ, հիմնաւոր և արգիւնաբեր ընելու համար իր ասուլիսը, սկիզբէն սխիւ, նախ սովորեցնէ մեզի իր այդ յի- շած երկրներուն, բաւականներուն, քա- ղաքներուն աշխարհագրական դիրքն ու կացութիւնը և ապա անցնի անոնց յարակից մասերուն:

Չենք կրնար պնդել թէ այս տպի- տութեան պատճառն ալ թուրքիստանա- վորութիւնն է: Անիկա կը փոփոքէր ան- շուշտ որ մեր վարժարաններուն մէջ մանրամասնօրէն դասախօսութիւն իր տիրապետութեան տակ գտնուող երկ- րին բնական և քաղաքական բաժա- նումները, բայց բնական խորում մը այն ամենուն համար որ թուրքէն կուգոր, կարծես թուրք կը կանգնէր մեր առ- աջակ և մինք չը հետաքրքրուեցանք ծանօթանալ անոնց, ըլլայ նոյնիսկ ի- րենց թրքական յորշորջումներով:

Ու հիմա, մենք ստացած ենք վի- ճակը այն բաղաւոր մարդուն, որ եր- կար տեսնենք վարժքով ասոր անոր տունը իր կեանքը քաշքշէլէ վերջ, կիմանայ թէ տիրացի է անյուսուլի ժառանգութեանը տանը, որուն համար կըսուի՝ թէ դարակները, շահմարան- ները լիքն են անհաշուելի, անբաղդա- տելի այլազան հարստութիւններով, բայց որուն դիրքը, կլիմայական պայ- մանները բոլորովին անծանօթ կը մնան իրեն:

Չգիտեր թէ ինչպէս կ'առուցուած է ան. քանի՞ յարկ ունի, ո՞րքան բա- ժանումներ, կեանքի պայմանները ինչ չափով կը լրացնէ, ո՞ր դուռներով, ո՞ր ճամբաներով կ'հաղորդակցի դուրսի աշ- խարհին հետ, ուրկէ կ'առնէ արեւ, ո՞ր կողմէն աւելի կը փչէ մեզմ կամ խիտ հովը, տան ո՞ր սենեակը աւելի կը յարմարի իր կազմին, խառնուած- թիւ և զբաղումներուն և այլպէս յա- շորագար:

Այս պայմաններուն տակ այդ տու- նը բնական է համար ճամբայ ելնող մը բնական է թէ ըստ բաղդի ընտրութիւն մը պիտի ընէ անշուշտ մատուռի գըծ- ուարութիւններու, յուսախօսութիւն- ներու, որոնք ազեցաբեր միայն կըր- նան ըլլալ իրենց վիճակագրիչ և շլա- տիչ հանգամանքով:

Հայաստանի աշխարհագրական, կլի- մայաբանական, հանքաբանական, ան- տառաբանական, արդիւնաբերական, ճարտարաբանական հաղորդակցու- թիւններու, հարեան երկիրներու հետ յարաբերութիւններու միջոցնեցուն և այլն խնդիրներու վրայ ձեռնհասօրէն մշակուած հրապարակային դասախօ- սութիւններ կոչուած են, որոնք, մեծ օգուտ մ'ընծայելու ներդրողով պատ- ըաստուող հայութեան և հարկ է որ ձեռնհաս մարմիններ անպայման և անյապաղ ձեռնարկեն այս նիւթին վը- րայ հրապարակային ասուլիսներ սար- քելու:

ԶԱՐՆՉ ԳՍՎԵՋՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳ

ԱՆՅՈՑՏՆԵՐԸ

Ս. Ստեփանոս եկեղեցւոյ տաճա- րին պատին փակցուած է երկար ցունկ մը անյայտ տարագրիչներու, անշուշտ հասարակութիւնը նկատողութեան կ'առնէ յիշեալ յայտարարութիւնը և անոնք որ տեղեկութիւններ ունին կը հաճին հաղորդել Առաջնորդարան:

ՆՇԱՆԱՅՈՍՈՒԹԻՒՆ

Գոհութեամբ կ'արձանագրենք որ այս երեկոյ Ամերիկ. Աղջկանց պատըս- պարանին մէջ տեղի կուսենայ Օր. Վիլթորիա Գըլլըճեանի նշանախօսու- թիւնը Պ. Նազարէթ Պըլլըճեանի հետ, այս առթիւ Տեսչուհի Տիկ. Հէտիլ ծանօթներ հրաւիրած է ներկայ գըս- նուելու այս յուզիչ նշանախօսու- թեան:

ԹՈՒՐՆԻԿ

Յառաջիկայ Չորեքշաբթի գիշեր ի նպատակ Աղջ. կեդր. Որբանոցի՝ Օլիմ- բիա թատրոնին մէջ կ'ներկայացուի Ահարոնեանի Արջաւիչ Հոփեր «Չոր- թօնը» կարանական Միութեան նա- խաձեռնութեամբ Հասարակութիւնն անտարակոյս պիտի քաջալերէ ոչ մի- այն Որբանոցն ու «Չորթօնք» Մի- ութիւնն, այլ նաև այն օրիորդներն ու պարսնները, որոնք յանձնառու ե- դած են այս տեսակ բալետայատկ ձեռնարկի մը օժանդակել իրենց բո- լորանուէր մասնակցութեամբ:

ՇՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՔ

Հայ երիտասարդաց Միութիւնը իր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնէ Պ. Պ. Մ. Մատանեանի որ գե- ղեցիլ ուղերձ մը արտասանած է, դաշտանադէտին մէջ, արձանագործ Պ. Փափաղեանի և Օր. Գարբիեանի որոնք կենդանի պատկերներով զարդ տուին հանդէսին, Իփիլեճեանի, Ար- մաղեանի, Օր. Խանճեանի, Տօթթ. Հ. Գալճեանի, Ար. Արղուեանի, Կ. Պալապանեանի, Մարեանի, Սպարից Միութեան, «Քնար»ի, Պոյ - Աքառութ- ներու, որոնք ամենքն ալ իրենց ու- սանն բերին դաշտանադէտին յաջո- ղութեան:

Այրի Տիկին Եւպրաքսէ փիլիսո- պոսեան հրապարակաւ իր շնորհակա- լութիւնները կ'յայտնէ Տօթթ. Տ. Թօ փալեանի որ ստոյգ մահուանէ մը ա- զատեց իր օրդին Պ. Փիլիպոսը որ թիւֆիսէ բռնուած էր:

ՅՈՒՆ. ԵՒ ՀԱՅԿ. ԹԱՏՐՈՆ

Յունական և Հայկական թատե- րական խումբերն միասնաբար ըլլալով սկսած են իրենց ներկայացումները ա- մառնային Օլիմպիա թատրոնին մէջ: Առաջին ներկայացումը պիտի արուի այս երեկոյ ժամը ճիշդ 7 ին առաջ- նորդութեամբ Տ. Վիլմիի Տէլէնաու- տի և Պ. Վ. Շահինեանի Այս ցերե- կոյթին կ'մասնակցի Հայկական «Փան- Փար»ը:

ԴԱՐՁ

Երէկ հրամանաւ գրուածն բանակի հրամանատարին տարի մը առաջ իս- լամացած Գորտէլիցոյ 18 - 19 տարե- կան Մարի Անդրանիկեան առնուած է թուրքերու ձեռքէն և յանձնուած Ա- մերիկեան Աղջկանց Որբանոցը:

ԲԱՑ ՆԱՄԱՆ

Մարիտայի կառավարչէ Հիւնի ղեկ Ներքին գործերու քով մտնի երկ- րային և մերթ բացայայտ հայութիւն- նին հասկցուած որբերու քննութեանց համար գիտում եղաւ ձեռք, ձեռք խօս- քերով անկեղծ բարեացակամութիւն ցոյց տուի: Եւ երբ այդ մէկ երկու որբերու հարեանցի քննութիւններէն հետք պէտքը տեսաք հաշիւի, մեր առաջարկով, այդ հարցաքննութեանց ներկայ գտնուելու համար պաշտօն սուրբ ինձ:

Այն ատեն ձեր բարեացակամ խոս- տուցիւններն շլացած, ձեռք անպայման վատահոլութիւն յայտնեցինք և նոյնիսկ առանձինն ձեր ոչ պաշտօնական քնն- նութիւններէ վերջը ձեր զոյացուցած մոզումին հետեւանօք տուած որո- հաշումներ ընդունելու չափ առաջ գտ- ցինք, անսահման վատահոլութիւն ցոյց տարով:

Սակայն, կը ցուանք ըսել որ եր- կու որբերու քննութիւններէ վերջը, Պահրի էֆ. ի տան մէջ գտնուած որ- բին համար, երբ ութը ասուք վկա- ներ, որոնցմէ ոմանք տղուն այլ Բաֆ- առչեւ խաչ հանելը տեսնելին, մը- նացեալ վկաներն ալ նոյնպէս տղուն հայ ըլլաւը, անունը Ալիքանն ըլլալ և սպառնալիքի տակ վարնալուն միայն իր հայութիւնը ուրանալը բա- ցարձակապէս կը վկայեն, որովհետեւ այդ տղան պաշտօնական քննութեանց ատեն ես թուրք եմ, կ'ըսէ, դուք ար- զան յանձնել չէք ուզեր մեզ, այլ կու- սակալութեան բովէն անցնելու հա- մար գիտում ընելու պէտքը կ'ըզգար և ի հարկին, նոյնիսկ ներքին գործոց նախարարութեան գիտումին պէտքը հաւանական կը նկատէիք:

Ստորագրեալս, երբ այդ բացար- ձակապէս հայ ձանցուած տղուն քնն- նութեան ներկայ գտնուելուս հե- տեւանօք անոր հայութեանը վրայ կը պնդէի եւ զայն մեզի յանձնելիք կ'առաջարկէի, այն ատեն է որ ձեր ձայնի բոլոր ուժգնութեամբ կը պօ- ռայիք, ձեռքերնիդ սեղանին կը զար- նէիք, բարկանալով միեւնոյն ատեն որ ձեզի անվատահոլութիւն ցոյց կ'որոտի իմ կողմէ: Թառուալիք ու ֆառիսէի գոր- ծեր կը տեսնէիք իմ արարքներուս մէջ: Չփոփոխութեան հետ էրնիք կ'ուղղէիք ինձ: Միեւնոյն ատեն այս որբերու մասին իմ ոչ գիտում ընելս և ոչ ալ ձեզի հետ հարում ունենալս կ'առաջարկէիք և ցոյց կուտայիք ներկայ իմ ընկերս, Պ. Յակոբ Յովհաննէս- եանը, անոր վերաբերումը աւելի պաշաճ նկատելով:

Ասում աղայի քով գտնուած հայ որբերը, որոնց մասին նոյնիսկ Ասում աղայի խոստովանութիւնները և ապա- ցոյց ու վկաներ կան մէջտեղ, այդ տեսակ որբեր ըլլալը կը յայտարա- րէիք:

Իրը թէ ձեզմէ պաշտօն մը խնդ- րելու համար գիտում ըրած ըլլայի և իմ մասնագիտութեանս ճիշդ հասկնալու և ըստ այնմ որոշելու հա- մար միլիթիլիթ թի առաջիկային մէջ կըր- նամ օգտակոր ըլլալ, իմ ո՞ր գոյրցէն չըջանաւարտ ըլլալս կը հարցնէիք, որով հառկցնել կ'ուզէիք անուղղակի իրարիւ թէ՛ իմ խելքս այդ տեսակ րաներու չհասնի, որուն ի պատաս- խան ևս ալ քիչ շատ դատարաններու մէջ գտնուելու իրը անգամ զատարանի և քանաթի ինքնալի ունենալս հասկը- ցնել կ'ուզէիք ձեզ, սակայն զուք դարձնալ կը բարկանայիք ալ աւելի ուժգին զարնելով սեղանին ձեր ձեռ- յը և ֆառիսէի ու ֆառիսէի բառերը կը կրկնէիք միշտ:

Պէտք է ֆէնտի, միութեամբ ու փա- նաթիք բառերը չեն վայլի ինձ: Դուք տեղացի չէք, զիս չէք ճանչնար: Իմ թուրք քաղաքակցներս շատ լաւ կը ճանչնան զիս: Անոնցմէ կրնաք իմ ինչ նկարագրի տէր ըլլալս հասկնալ նա երբէք իմայիլները՝ Ալէքսանդր- ու և Մէհմէտները Արթիւններու փո- խելու իրը աշխատող ամբարտանաւ:

չեմ: Այդ տեսակ արարքները, բացա- ութիւնները յարգելով, որոնց հա- մար հիացումս կը յայտնեմ, ձեր թուրք ազգակիցներու մէջ փնտուեցէք, որոնք հայեր ու մայրեր և երիտա- սարգներ սպաննելէ, նոյնիսկ կաթն- կեր մանուկներ մահացնելէ, կրնե՞րու պատիւները բռնաբարելէ և կոյս աղ- ջիկները պղծելէ վերջը, հրաշքով մա- հէ ազատուած փոքրիկ Ալիքանները՝ իմայիլներու և Արթիւնները՝ Մէհ- մէտներու փոխելու գործին մէջ վերջին ծայր մասնագէտներ ճանչցուած են քաղաքակիրթ աշխարհի առջեւ:

Մնամ խորին յարգանք
Մաղնիսա Թ. ԿՆԵՐՈՒՆԻ

Տեղական Լուրեր

ԳՆՉՏՕՆԱԿԱՆ ԱՉԳ

Հելլէն ընդանուր բանակատեղի հրամանատարութիւնը կ'ընտելանէ Հելլէնական բանակը Տիբիլիսի - Պեր- կամաի շրջակայքը մաքրած ըլլալով զբաւած է Պերկաման հոն հաստա- տելով կարգապահութիւնը և օրէնքը: Ա. Զօրաբանակի սպայակոյտի պետ Գրապիտ ԹՕՐՆԵՍՍ Գեորգի Սիւրիսոսթօմօս առջի օր աւաւտուն ընդունած է տեղայն հելլէն ծովային իշխանութեանը հրամանատարին այցելութիւնը: Նոյն օրը իրիկուան Գեոր. Սիւրիսոսթօմօս այցելած է զօրավար Նիտէրի, գնդա- պետ Զօրիթիլիսի:

«Բէ՛ՅԵԼԻ» հետեւեալ կ'գրէ. — Իզ միլի օտար հպատակ բնակչութիւնն երկու յանձնախումբ կազմուած է: Ա. նոնցմէ մին պիտի երթայ Լօնտօն իսկ միւսը Բարիկ, ուր բացատրու- թիւններ պիտի տան հելլէն զօրացի կողմէ Իզմիրի գրաւման ընթացքի պատահած վերջին դէպքերուն վրայ, ինչպէս նաև պիտի պարզեն քաղաքին ներկայ և ապագային ունենալիք կացութիւնները:

ՆՈՅՆՊԵՆՍ կազմուած է վերջին դէպքերու ակնուտեստ երիտասարդ- ներէ բաղկացած յանձնախումբ մը որ թէվիթիք փաշայի Բարիկ մեկնելէն առաջ, տեղակալի մը տուած է այս դէպքերուն վրայ: Մէնթիլիս մեկնած է մասնաւոր կառավարմանը բժշկական մար- մին մը, ուրկէ ստիպողաբար կան- չուած էր: Կ'ըզգանայ Տօթթ. Պասօ, Պրուէթթի, Ֆիլիթուէլի Այս մարմինն. կ'ընկերանայ շարժուն հիւանդանոց մը:

ՄԵՐ յոյն և Ֆրանսացի պաշտօնա- կիցները այս շարքէն սկսեալ երկու- շարթի օրերը թերթ չպիտի հրատար- կեն կիրակի օրերը հանգիստ տու- լով զբաշարներուն:

ՄԱՆՆԻՍԱԻ նախկին զինուորական կառավարիչ Սալի էֆ. ձերբակալուե- լով, փոխադրուած է քաղաքի պա- տերապական ատանի բանտը կամ- բաստանուի խռովութեանց կազմակեր- պողի յանցանքով:

ԳԱՒԱՌՆԵՐԸ հասած լուրերը կը տեղեկացնեն թէ գործադրիչներու պա- կասին պատճառաւ ձխախտի, այգի- ներու և արմաթի արտադրութիւննե- րը բաւական վնաս կրեցին: Վերջին դէպքերու հետեւանքով յառաջ եկած անպահովութիւնը պատճառ կը գաւ- նայ որ այգիներու և ձխախտի գաշ- տերու անհրաժեշտ խնամքները զուգ- ունին:

Երէկ տառտուուն պատերազմական տեսանը կրկին գումարուելով զբաղած է Ապետին Զատէ Թէթիք Օթէլ Ասնդ- րալի տնօրէն- սեփականատիրոջ խնդ- րով: Գիտենք թէ յիշեալ ամբաստան- ուած էր գրաւման օրը հելլէն գտնողե- րուն զէնք պարպած ըլլալուն համար: Այն էվզօնները որոնք իւր վկայ շա- նակուած էին կանչուեցան գատարան, գատավարութիւնը բաւական երկայն տեցը Մանրամասնութիւնը յաղորդու- ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԻ կը տեղեկանան:

տուածին հրամանատար Նիգիֆորագիս տեղակալ-գնդապետի աստիճանին բարձրացած է:

ՔԱՂԱՔԻՍ հելլեն բժշկական մարմինը սեզան մը սարքած է ի պատի հելլեն բանակի բժշկապետ Արնոսի Սեզանը տրուած էր Սեբրգինի Գլխավոր բժշկական տանիքին վրայ: Ներկայ գտնուած են հելլեն կարմիր խաչի բշկապետ սօք: Յունուզաս և քաղաքիս բոլոր բժիշկները:

ՄէնէՄէնի մէջ վերջին օրերս պատահած դէպքերը քննելու համար կուսակալ Իզգէթ պէյի հետ Համաձայնական յանձնախումբ մը մասնաւոր շտաբաւորով մեկնած են տեղւոյն վրայ քննութիւն կատարելու համար:

ԶՕՐ. ՆԻՏԵՐ երէկ այցելած է Գօրտեխիօի մէջ գտնուող Նիքոսի Մետրապօլիտին, այս առթիւ հոն կանչուած են թուրք երեւելիներն և Զօրավարը յայտարարած է որ կարգ մը մարդոց խաբէութիւններուն կարեւորութիւն չտան և անդորրութեան պահպանման բժանկիր ըլլան, թէ թուրքերն քրիստոնեաներէ աւելի արժանի պիտի ըլլան հոգածութեան և իրիւս սպասարկող ցոյց ցոյց տուած է Հելլեն հողի մէջ գտնուող խաւաններու վիճակը:

ՊերկաՄԱԷ երէկ քաղաքս փախչող թուրք կիներու, մանուկներու և մարդոց վրայէն զէնք, թանկարժէք իրեղէններ, ոսկեղորած և յատուկ յանձնարարելի նամակներ գտնուած է. Պամահանէի կայարանը հելլեն զօրաց կողմէ եղած խուզարկութեանց վրայ: Ասոնք պահականոցներու մէջ առաջնորդուած են հարցաքննուելու համար:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Ա.Զ.Գ. ԿԵՂԻ. ՈՐԲԱՆՈՅԻ

Վարչական խորհուրդս ստացած է հետեւեալ նուիրատուութիւններն որոնց համար կը փութայ հրապարակու յայտնել իր խորհին շնորհակալութիւններն: Յունիս 11ին Իզմիրի թատրոնին մէջ Օր. Յիմալիի և Պ. Ա. Տէտէեանի կողմանէ արուած նուագահանդէսին կես հասոյթը Լ. Օ. 86.20

Table with 2 columns: Donor name and amount. Includes 'Որդեգրութիւնք Ապր-Յունիս ամսականներ', 'Եղբարք Ճանիկ Էլմասեան', 'Չարեհ Սպարթալը', 'Պալապանեան Դերձակեան', 'Յարութիւն Բագլաւաճեան', 'Բարեւէր ոմն', 'Եղբարք Սիմօնեան', 'Մատուր Քէրէսթէճեան', 'Հայկ Հճի. Ղազեբեան', 'Հայկ Քէրէսթէճեան', 'Հրանդ Նիգօթեան', 'Ղեւոնդուհի Գ. Գարապաշեան', 'Ղազեր Ղազեբեան', 'Մ. Ս. Ղազարուսեան', 'Միքայէլ Բարազեան', 'Յակոբ Պօթմանճեան', 'Սիմօն Յակոբեան', 'Վարդ Ս. Թաղաճեան', 'Յովհ. Բէշղիմալեան'.

Ի դիմաց Ազգ. Կեդր. Որբանոցի վարչական խորհրդոյ Գանչակեր Ս. ԹԱԳԻՈՐԵԱՆ

Ա Ջ Գ

Օթօման կազ Գօմբանի Լմդու. 4Է ծանուցանէ իր յարգոյ յաճախորդներուն թէ՛ 1919 Յունիս 1է սկսեալ 10% զեղչ պիտի ըլլայ Մօթէօրներու, Թերմօսիֆօններու, խոհանոցի վառարաններու համար սպառած կազին վըրայ, ի բաց առեալ լուսաւորութեան կազը, սակէ զատ կազի ժամացոյցներու վարձագինը հետեւեալ կերպով որոշուած է.—

Table with 2 columns: Consumption amount and discount rate. Includes 'Ժամացոյց 2 լրոյսով 10 դրչ. առակա՛ն', '» 3 » 15 » »', '» 5 » 20 » »', '» 10 » 25 » »', '» 20 » 38 1/2 » »'.

Բարձր տարողութեամբ ժամացոյցներու վարձագինը պիտի հաշուուի նոյն հիման վրայ:

ԱԶԳ. ՄԵԾ ԶԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ

ՅԱՆԿ ԹԻՒ 1.

Table with 2 columns: Item name and amount. Includes 'Գօճամոնեան և Անտօնեան', 'Ստեփան Մ. Իփլիքճեան', 'Ստեփան Իփլիքճեան', 'Մ. և Գ. Պերկամալեան', 'Միլիթարիան Ազնաւորեան', 'Ստեփան Ա. Խոթիքեան', 'Պաքճեան Եղբարք', 'Հրանդ Նիգօթեան', 'Մատուր Քէրէսթէճեան', 'Քերովթէ Թօփալեան', 'Խոսրով Գայսեան', 'Հայկ Քէրէսթէճեան', 'Արթուրի Գայփաբեան', 'Սեդրակ Կիրիւնլեան', 'Հայկ Ղազեբեան', 'Ստեփան Գէորգեան'.

Հ Ր Ա Ւ Ե Ր

Ս. Գ. Իզմիրի Հնչակեան կուսակցութեան ընկեր. 5րդ. ժողովը յա վաղը երկուշաբթի 24 յունիս երեկոյան ժամը 7 ին Ս. Մետրապօլիտանի վարժարանի մէջ տեղի պիտի ունենայ, իսկ 6րդ. ժողովը յառաջիկայ Ուրբաթ 28 Յունիս միեւնոյն հաստատութեան մէջ:

Ս. Գ. ՀՆՉԱԿԵԱՆ Իզմիրի Մասնակց

Հ Ե Լ Վ Է Ց Ի Ս

ՀՐԴԵՆԻ ԶՈՒԻՑԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Հաստատութիւն 1861 ի

Անդրձական հաստացում վիճասոց և նպաստուող պայմաններ

Ընդհ. ներկայացուցիչ Իզմիր ԱԻՆՏԻՔԵԱՆ ԵՂՅԱՐ

ՀՐԱԻՐ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Այսօր կիրակի, կէսօրէ ետք, ժամը 4-ին ընկերական ընդհանուր ժողով տեղի պիտի ունենայ Ս. Մետրապօլիտանի վարժարանին մէջ, ուր պիտի խօսի նաև ընկեր Կ. ՍՍՈՒՆԻՆ. ընկերակիներ ու ընկերները անպայման ներկայ գտնուիլ ճիշտ ժամանակին: Հ. Յ. Գ. ԻԶՄԻՐԻ ԿՕՄԻՏԷ

ԱՐԵՏՏԻՍ ԱՃԱՐՈՆԵԱՆԻ

ՀՈՉԱԿԱՒՈՐ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԱՐՅՈՒՆՔԻ ՀՈՉԱՐՏԷ

Ճօխ յայտարարով մը պիտի ներկայացուի յառաջիկայ 25 Յունիս Դ. ժ. 9.30ին (Կ. Ե.)

ՕԼԻՄՊԻԱ (ԹԱՏՐՈՆԵՆ ՄԷՉ

«Զարթօնք» լարին. միութեան կողմէ Հասոյթին կէսը ի նպատու Ազգ. Կեդր. Որբանոցի

Որդեղի Էրեկյայէ ուսուրէ ժամը 12ին պիտի սկսի ճիշտ 9.30ին, առտոնց նըկատի առնելու ներկաներու թիւը:

Տոմսերու գիններն են. Յօթէօյլ 1ուկէս ոսկի, Ա. կարգ 1 ոսկի, Բ. կարգ 50 դրչ., կալըրի 25 դրչ.: Տոմսերը կը թուագրուին թատրոնին կիշէն. կիր. ժամը 10.12 (կ.ա.) և 3-6 (կ. Ե.): Բշ. Դշ. Դշ. օրերը ժամը 9.12 (կ. ա.):

ԹԻՆՏՈՐԱԾ ԲՍԱԽՆՈՒՄԻՍԻՍ

ՋՐԱՐՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ Բ Ա Ղ Ն Ի Ք Ն Ե Ր

Ջրաբուժութեան և Մասաթի օգտակարութիւններն ամեն տեսակ հիւանդութեանց համար անժխտելի են: Այս տեսակ հաստատութիւնէ մը պիտի յիս թան անշուշտ օգտուիլ ամեն սեռի և հասակի անհատներ, ուր հաստատութիւնն ունի նաև իր ներքին բժիշկները:

Բէշիտիէ փողոց, նոր փոսան զիմաց՝ Յընալք փողոց թիւ 19, 32:

Ազգային Անցուդարձ

Պերկամաի մէջ պատահած ոճրագործութեանց մասին Բաղ. ժողովը որոշած է հեռագրու տեղեկութիւն տալ Բարիկի Հայ Պատուիրակութեան նախագահին: Այս մասին պատրաստուելու վրայ է դրուելիք հեռագրերը: Որու պատճէնը պիտի հաղորդուի նաև հրէից առաջնորդարանին, որպէսզի անոնք ևս իրենց Բարիկի ներկայացուցիչներուն հեռագրեն հարկ եղածը: — Գընըզի հայերն վախճալով ոճրագործ խուժանին և աւազակներու զոր ըլլալէ, խմբովին գաղթած են Իզմիր և Ս. Ստեփանոսի բակը լեցուած: Այդ խեղճերուն օգնութիւն ընելու համար անշուշտ պէտք եղած միջոցներն կ'իտրոնի սղգ. վարչութիւնը: — Ուրբաթ երեկոյ դատաստման կան ժողովը իր շարաթական նիստը գումարեց և զբաղեցաւ ամուսնական խնդիրներով: — Պ. Օհան Սաթճեան 4 ոսկի նուիրած է Գօրտեխիօ ազգատաննամին:

ԻԶՄԻՐԻ ԱՎԱՐԱՆ

Table with 3 columns: Name, Amount, and Date. Includes 'Յունիս սեղական 15 —18 1)2', 'Յունիս Ուշագ 14 —18 1)2', 'Գարի, սեղական 7 12-9 1)2', 'Գարի, Ուշագ 71)2-10 1)2', 'Բակլայ 51)2-5 3)4', 'Սուսաճ 31 —36', 'Ազարը 101)2-12 1)4', 'Սարը արը 10 —11 1)4', 'Նօնուս, խոշոր սեսակը 12 —17', 'Լուրիս 35 —37', 'Պէօրիճէ, ճերմակը 25 —26', 'Պէօրիճէ, գունաւոր 18 —19', 'Խուլաֆի ապրանք չկայ', 'Խաշիաշ', 'Պրչակ, գործ չկայ 3 3)4- 4', 'Բաւլակի կուս 17 —19', 'Սեւ չամիչ 8 —9 1)2', 'Խուրսա 8 —9 1)2', 'Բաւլակի գործ չկայ 65 —70', 'Վուշ 11 —11)2', 'Մախուած', 'Յունիս 3000 պ.', 'Գարի 1730 պ.', 'Բակլայ 50 պ.', 'Կ. ՊԱՂԱՅԵԱՆ Իզմիրի Սակարան'.

ԵՐԷԿ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պօլիս, 21 Յունիս 1991

Տանկերու Խորհուրդը այսօր գումարուելով պիտի խորհրդակցի Ֆէրիտ փաշայի տուած ծանուցարկին վրայ: — Բարիկին կը հեռագրեն թէ երբ որ թուրքիոյ մասին որոշումներ առնուին թուրք պատուիրակութիւնը պիտի կանչուի կրկին լուսելու համար Համաժողովին կողմէ: — Նախկին վարչապետ Թէվրիք փաշայ, Մարտէյէն Քիւնիկելով հասած է առջի օր Սէն ժէրմէն: Կայարանն ընդունուած է Փրանսացի գնդապետ Հանրի, անդլիացի տեղակալ-գնդապետ Պլատեր և Իտալական բարձրագոյն սպայ՝ Գասանքի կողմէ: Անմիջապէս ինքնաշարժով փոխադրուած է իրեն համար յատկացուած զղեակի մը մէջ: — Իթիլաֆ կուսակցութեան նախագահ գնդապետ Սատըզ պէյ հրաժարական տուած է Ֆէրիտ փաշայի դահլիճին մէջ իր ունեցած անպաշտօն նախարարութեանէն: — Բարիկէ կը հեռագրեն թէ Ֆէրիտ փաշայ Համաժողովէն պիտի խնդրէ որ թուրք ներկայացուցիչներուն ալ շնորհուին նոյն իրաւասութիւնները, ինչ որ շնորհուած էր Գերման և Աւստրիական պատուիրակներուն:

ROYAL EXCHANGE ASSURANCE

ՀՐԴԵՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընդհ. գործակալ C. WHITTALL et Co. Շ. ՈՒՒԹՅՈՂ և ԸՆԿ.

ԳՆԵԼՈՒ ԱՃԱՐՈՆԵՅԷՔ

ԼԷԲՍԻՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԴԵՐԸ

ԳԻՆ 80 ՂՐՈՒՇ

ՍՏԱՅԱՆՔ ՄՕՐԿԸՆԹԱՈՒԻ

ԽԻՍՏ ՀԵՏԱՔՐՔԱԿԱՆ ԾԱՆՕԹ ԳՈՐԾԻՆ ԱՄՔՈՂՁՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆ 90 ՂՐՈՒՇ

ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պօլիս 22 Յունիս 1919

Զաւէն Ս. Պատրիարք Յունաց Պատր. Փոխանորդին այցելութիւն տուած է Յունաց Պատր. Փոխանորդը տեղեկութիւններ հաղորդած է Բարիկի հայ պատուիրակութեան և ի մասնաւորի Պօղոս Նուպարի և Հայաստանի անկախութեան մասին:

— Կ. Պօլսոյ հելլեն 1919-1920ի զինուորացուները կանչուած ըլլալով մեկնած են Բիբէտ:

— Համաձայնականներն պիտի հրատարակեն այսօր իրենց Գերմանիոյ տուած վեւջին պատասխանը: Օգանտ մը հաշուութեան այդ պայմաններէն 45 օրինակ տարած է Լօնտօն որ կը պարունակէ 436 էջ:

— Հինգերու ժողովը անցեալ հինգշաբթի օր գումարուելով Լեհերու, Արեւելեան Կայիցիոյ և Ուրբանիոյ նաև Աւստրիոյ հարաւային սլաւական սահմաններու և Տանցիկի մասին խորհրդակցութիւններ ունեցած են:

— Ռէնի գետաբերանը գտնուող համաձայնական բանակը շարժման մէջ մտնելու կ'պատրաստուի:

— Գերման ժողովուրդը զինուորական այս շարժումներուն առջեւ մտաւորութեան մէջ կ'գտնուի:

— Գերման պատուիրակները Պերլինէ իրենց դարձին ի վերսայլ ժողովուրդին կողմէ քարկոծուած են և սասնցնէ ոմանք վիրաւորուած: